**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4**
**22.11.2022Թ. ԿՆՔՎԱԾ N ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան «08» դեկտեմբերի 2023թ.

Ջրային կոմիտեն, ի դեմս Կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Ղազարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) և մի կողմից «Մոդուլ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 2103-Ն որոշման 3-րդ կետի 3)-րդ ենթակետը և 22.11.2022թ. կնքված N ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

**1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պայմանագրով նախատեսված Չափաբաժին 1-ի՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում Արգիճի և Աստղաձոր ջրամբարների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների 278 700 000 (երկու հարյուր յոթանասունութ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ գինը տարանջատել հավասար համամասնությամբ՝ սահմանելով յուրաքանչյուր ջրամբարի համար 139 350 000 (մեկ հարյուր երեսունինը միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

1.2 Պայմանագրի 4.1 կետում «278 700 000 (երկու հարյուր յոթանասունութ միլիոն յոթ հարյուր հազար) թիվը և բառերը» փոխարինել «ա) ՀՀ Գեղարքունիքի մարզում Արգիճի ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ 139 350 000 (մեկ հարյուր երեսունինը միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ: բ) ՀՀ Գեղարքունիքի մարզում Աստղաձոր ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ 139 350 000 (մեկ հարյուր երեսունինը միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:»:

1.2 Պայմանագրի Համաձայնագիր 1-ով սահմանված վճարման ժամանակացույցի «278 700 000», «174 000 000», «156 000 000» թվերը փոխարինել «69 675 000», «87 000 000» և «78 000 000» թվերով:

**2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագիրը գործում է մինչև կողմերի կողմից սույն համաձայնագրով և Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

**3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՊԱԼԱՌՈՒ** |
|---|---|
| Ջրային կոմիտե | «Մոդուլ» ՍՊԸ |
| ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա | Ք. Երևան, Ն.Զարյան 22, տարածք 3 |
| Հ/Հ 900011038610 | էլ. հասցե info@modul.am |
| ՀՎՀՀ 02555816 | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կոմիտաս մ/ճ |
| գլխավոր քարտուղար | Հ/Հ 11500404281400 |
| | ՀՎՀՀ 05020542 |
| | Տնօրեն |
| ________ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ | ________ Ն. ՀԱԿՈԲՅԱՆ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1
«22» նոյեմբերի 2022թ.
N ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն գնման պայմանագրի
«08» դեկտեմբերի 2023թ.
կնքված Համաձայնագիր 4-ի
««22» նոյեմբերի 2022թ. կնքված N ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն գնման պայմանագրի Հավելված 2-ի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**
**2023թ.**

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | |
|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | |
| | | | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200/1 | Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում | 69 675 000 | 69 675 000 |
| 2 | 71241200/2 | Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում | 87 000 000 | 87 000 000 |
| 3 | 71241200/3 | Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում | 78 000 000 | 78 000 000 |
| | Ընդամենը | | 234 675 000 | 234 675 000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով»*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011038610
ՀՎՀՀ 02555816
գլխավոր քարտուղար

_______________ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Մոդուլ» ՍՊԸ
Ք. Երևան, Ն.Զարյան 22, տարածք 3
էլ. հասցե info@modul.am
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կոմիտաս մ/ճ
Հ/Հ 11500404281400
ՀՎՀՀ 05020542
Տնօրեն

_______________ Ն. ՀԱԿՈԲՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.